



**ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ք.Երևան

3-րդ հուլիսի 2017թ.

**ԵՎՐԱՍԻՈՒԹՅԱՆ ԹՎԻՆԻՆԳ ԾՐԱԳՐԻ ՆԵՐՔՈ  
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՎԱԾ [www.armstat.am](http://www.armstat.am) ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ  
ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Եվրամիության (ԵՄ) «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – 2-րդ փուլ» թվինինգ ծրագիրը, որի շահառուն ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (ՀՀ ԱՎԾ), իսկ իրականացնող գործընկերը՝ Դանիայի վիճակագրությունը, մեկնարկել է 2015թ. օգոստոսից՝ 2 տարի տևողությամբ:

Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի պաշտոնական վիճակագրության արդիականացմանը՝ ներդնելով ԵՄ ստանդարտներին համապատասխանեցված վիճակագրության նոր մոտեցումներ՝ բարելավելով պաշտոնական վիճակագրության տարածումը հանրության շրջանում:

Ծրագիրը բաղկացած է 6 բաղադրիչներից, որոնցից առաջինը «Վիճակագրական տեղեկատվության տարածման բարելավված համակարգն» է: Վերոնշյալի շրջանակում մշակվել են ՀՀ ԱՎԾ տեղեկատվության տարածման և հաղորդակցության ռազմավարությունը և քաղաքականությունը, որոնց նպատակներից է սպառողների կարիքների լիարժեք բավարարման համակարգումը և նրանց կողմից վիճակագրության արդյունավետ կիրառումը: Այդ առումով, խիստ արդիական դարձավ ՀՀ ԱՎԾ [www.armstat.am](http://www.armstat.am) պաշտոնական կայքի վերափոխումը:

Դրանով պայմանավորված, հիմք ընդունելով Միավորված ազգերի կազմակերպության Պաշտոնական վիճակագրության 10 հիմնարար սկզբունքները և Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի 15 սկզբունքները, ինչպես նաև կարևորելով վիճակագրական տեղեկատվության սպառողների կարիքները, ՀՀ ԱՎԾ-ն Դանիայի վիճակագրության փորձագետների աջակցությամբ և խորհրդատվությամբ, վերոնշյալ բաղադրիչի շրջանակում իրականացրել է դեռևս 1999 թվականի ապրիլից գործող [www.armstat.am](http://www.armstat.am) պաշտոնական կայքի կառուցվածքի փոփոխություններ, մասնավորապես արդիականացրել կայքի «Գլխավոր էջը», այն դարձնելով ավելի պարզ և մատչելի, վիճակագրական տեղեկատվության սպառողի հետ հաղորդակցման համար՝ առավել դյուրին և հարմարավետ:

Արդիականացված պաշտոնական կայքի գործարկումը տեղի կունենա ս.թ. հուլիսի 7-ին:

